ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/37217/02/23

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2023 թվականի նոյեմբերի 13-ին Երևան քաղաքում

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Դունամալյանը, քննարկելով «Արտակ Մարտիրոսյան Համլետի» Ա/Ձ-ի ընդդեմ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ Արտակ Մարտիրոսյան Համլետի ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի 18.10.2023թ. թիվ 144-Ա/3 որոշումն անվավեր ճանաչելու մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու և պատասխանողից ապացույցներ պահանջելու հարցերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

հայցվորը 2023 թվականի նոյեմբերի 07-ին հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ Արտակ Մարտիրոսյան Համլետի ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի 18.10.2023թ. թիվ 144-Ա/3 որոշումն անվավեր ճանաչելու մասին:

Ներկայացված հայցադիմումը 07.11.2023 թվականին մակագրվել է դատավոր Ա. Դունամալյանին և դրան կից փաստաթղթերով 08.11.2023 թվականին հանձնվել դատավորի աշխատակազմին:

(I). Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը կարծում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

(II). Հաշվի առնելով, որ վերոնշյալ հայցադիմումն ենթակա է վարույթ ընդունման, Դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից պահանջել «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-23/59» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տրամադրման տակ գտնվող բոլոր ապացույցները:

(III). Դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Տ

1. «Արտակ Մարտիրոսյան Համլետի» Ա/Ձ-ի հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության

կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ Արտակ Մարտիրոսյան Համլետի ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի 18.10.2023թ. թիվ 144-Ա/3 որոշումն անվավեր ճանաչելու մասին, ընդունել վարույթ:

2. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից պահանջել «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-23/59» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները,

3. որոշման ապացույցներ պահանջելու մասի պահանջը պատասխանողի կողմից ենթակա է կատարման որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում,

4. որոշումն օրենքով սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց,

5. որոշումն ուղարկելու հետ միաժամանակ պատասխանողին տեղեկացնել հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքի և ժամկետի մասին:

6. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ**